

Հրաւեր բաժանորդագրութեան
ԺԴ. տարի
"ՀԱՆՌԵՄ ԱՄՍՈՐԵԱՅ,"
Ուսումնաքերք

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը :

Հայ-Գրական յօդուածներէն զատ՝ ճշգիւ տեղեկութիւն կը տրուի հայ-գրականութեան, պատմութեան, եւայլն նկատմամբ ամէն ամիս ելած նոր հրատարակութեանց վրայ : Նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տպուած կարեւոր լրերու վրայ :

«Աղգային լրագրաց բովանաակութիւն», թղթակցութիւն, ծանուցում, եւայլն :

Խմբագրութեան ղրկուած ամէն գրքերու վրայ՝ քննադատական հաւաստ տեղեկութիւն տալը պիտի շարունակուի :

Մեր հեղինակ ընթերցողաց հաճելի նորութիւն մը յուսանք պատճառել այնու որ խմբագրութեանս ուղղուած գրքերն անմիջապէս յաջորդ ամիսն թերթիս ծածկին վրայ պիտի հրատարակուին : Այն գրքերն որոնց վրայ մտադիր ենք խօսելու՝ կը զանազանենք միւսներէն աստղանիշով (*) մը :

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հին եւ Նոր Կտակարանաց

Պատրաստեց՝ Մարի Պոնտացի :

Դեռ քանի մը օր է որ լոյս տեսած է Պ. Պալենց գրատան հրատարակած այս գեղեցիկ գործը, որուն Հեղինակուհին՝ Տիկին Մառի Պոնտացի՝ Դերմանիոյ Դրեզդըն քաղաքի Ֆրէօքէլեան ձեմարանէն վկայուած հայ մանկավարժուհի մըն է, Դործը պատրաստուած է մանկավարժական օրինաց համաձայն, ամփոփ, յստակ եւ հրապուրիչ ոճով, եւ զարդարուած 60 նուրբ պատկերներով, որոնք յատկապէս փորագրուած են Դերմանիւոյ մէջ, ձեռամբ համակրելի փորագրիչ եւ նոյնպէս Պոնտացի Պր. Հ. Մանիսաճեանի (այժմ ի Զուիցերիա հաստատուած), Գործին ուրիշ մէկ գլխաւոր առաւելութիւնն է Ս. Երկրի քարտէսը, որ ցոյց կուտայ Բրիտոսի ժամանակուան բաժանումներն ու քաղաքները : Այս ընտիր դասագիրքը ջերմապէս կը յանձնարարենք մեր զպրօններուն մէջ գործածել : Հին եւ Նոր Կտակարանաց պատմութիւններն՝ երկու առանձին հատորներու մէջ ամփոփուած՝ կը ծախուին ֆական զրօի :

ՔԵՐԱԿԱՆ - ԸՆԹԵՐՃԱՐԱՆ

Ա. Տարի

Աշխատասիրեց՝ Մխիթար Պոնտացի

Այս անգամ իրաւցնէ հիմնովին մանկավարժական դասագրքի մը զիմացը կը գտնուինք : Ակնարկ մը յառաջաքան-ուղեցոյցին վրայ՝ որ սիրուն գլուխ-գործոց մըն է, բաւական պիտի ըլլայ համոզելու օր հեղինակը՝ մասնագէտ-մանկավարժ Մխիթար-Պոնտացի՝ ոչինչ խնայած է տիպար ընթերցարան մը նուիրելու հայ մանկուոյն : Գրել-կարդալու գրութեամբ պատրաստուած այս դասագրքին գիւրուտոյց մեթոտը, ձեռագիր օրինակները, նիւթերու ընական դասաւորութիւնը, ոճին միօրինակ յատկութիւնն ու գեղեցիկ պատկերներու ճոխութիւնը՝ ապահովաբար՝ առաջին տեղը պիտի սահմանեն անոր Հայ վարժաբաններու մէջ : Թուղթ, տպագրութիւն, կազմ ընտիր, Մատթէոսեան, հրատարակութիւն՝ Պ. Պալենց գրատան : Գին 5 զրչ :